ԳԼՈՒԽ ԾԲ.

Գալուստ վարդապետ։ Բողոք միաբանաց։ Մինաս վարդապետ Աղթեցի։ Այլազգիք Երուսաղէմի և Սիոնի։ Աւետիք վարդապետ։ Միութիւն Աթոռոյն Երուսաղէմի ընդ պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ։ Աշխարհական տեղակալք 'ի Ս. Յակոբ՝ Նոպէր անուամբ։

ԶԿնի մահուան Յովհաննու Պատրիարքի, իշխանաւորք ազգին Կոստանդնուպօլսոյ, ընտրեցին 'ի տեղի նորա զԳալուստ վարդապետ Զէյթունցի կոչեցեալ, և առին հրովարտակ 'ի Դրանէ վասն հաստատութեան Պատրիարքութեանն նորին։ Իսկ նորա առեալ զհրովարտակն եկ 'ի Կոստանդնուպօլսոյ, և սկսաւ շրջիլ յամենայն քաղաքս Ասիոյ, իբրեւ Պատրիարք Երուսաղէմի, և ժողովել զնուէրս 'ի ժողովրդոց յանուն նորա։ Սակայն միաբանք վանաց Ս. Յակոբայ կային յեսին յաղքատութեան և 'ի չքաւորութեան եւ դէտակն կալեալ սպասէին դալստեան Պատրիարքի իւրեանց, և կամ դէթ առաքելոյ օգնութիւն ինչ 'ի նպաստ պիտոյից։ Իբրեւ տեսին թէ 'ի շրջանի միոյ տարւոյ ոչ երեւեցաւ նա, և անփոյթ լեալ զնեղութենէ միաբանաց ոչ առաքեաց առ նոսա զնուէրս ժողովրդոց զորս հաւաքէր, և չէ ինչ փոյթ նմա զկառավարութենէ և ըզխնամակալութենէ վանաց. դիմեցին առ դատաւորն Երուսաղէմի, և ճառ արկեալ պատմեցին զթշուառութիւն վիճակին և զանիրաւութենէ Պատրիարքի իւրեանց։ Եւ նորա լուեալ զամենայն բանս եւ զհանգամանս գործոց նոցին, գրեաց և ազդ արար առ դատաւորն Կոստանդնուպօլսոյ։ Եւ 'ի սոյն ժամանակի հասին 'ի Կոստանդնուպօլիս հանրագրութիւնք ժողովրդոց Բերիոյ, Եւդոկիոյ, Սեբաստիոյ, Տիգրանակերտի և Կարնոյ, որք միաբան բողոք բարձեալ դանկատէին զանիրաւութենէ և զզրկանաց Գալուստ վարդապետի և ցուցանէին զայն վնասապարտ և խռովիչ ժողովրդոց. եւ զնուէրս զոր ժողովեաց խաբէբութեամբ յանուն Երուսաղէմի, ոչ առաքեաց զայն 'ի տեղի իւր, այլ ինքն չարութեամբ և անզգամութեամբ եկեր և վատնեաց ըստ կամաց իւրոց եւ վանք Ս. Յակոբայ հեծէ ընդ